

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՑԱԼ ԶԵԿՈՒՅՑ
2023Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Բանկը հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է հաճախորդներին որակյալ ծառայությունների մատուցումը և ապահովել է ֆինանսական ցուցանիշների աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատ:

Հիմնվելով վերջին տարիների արդյունքների և շահութաբերության մակարդակի վրա՝ հեռանկարային զարգացման համատեքստում Բանկի առաջիկա տարիների գործունեությունը միտված է այնպիսի համակարգային միջոցառումների և տեխնոլոգիաների ներդրմանն ու զարգացմանը, որոնք հիմնարար և կայուն հիմքեր ու նախադրյալներ կստեղծեն Բանկի նոր որակական զարգացման համար:

Անդրադառնալով հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ պետք է նշենք, որ Բանկը 2023 թվականի 1-ին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ապահովել է ակտիվների մոտ 17.2% աճ: **Ակտիվները** 30.06.2023թ.-ի դրությամբ կազմել են 461 մլրդ դրամ, ընդ որում հաճախորդներին տրված վարկերը (համախառն վարկային պորտֆելը) կազմել է 240 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով մոտ 12.6 մլրդ դրամով (5.6%-ով) և կազմել ընդհանուր ակտիվների 51%-ը, որից,

- Անհատական վարկային պորտֆելը աճել է 18.5 մլրդ դրամով (15.2%-ով)
- Բիզնես վարկային պորտֆելը նվազել է 5.9 մլրդ դրամով (5.6 %-ով):

Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են մոտ 54 մլրդ դրամով կամ 16.3%-ով և կազմել 392 մլրդ դրամ:

2023թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկի **սեփական կապիտալը** կազմել է 68.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 12.5 մլրդ դրամով կամ 22.5%-ով:

2023 թվականի առաջին կիսամյակում Բանկի **զուտ շահույթը** կազմել է մոտ 7.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 33.1%-ով:

Ծախս / Եկամուտ հարաբերակցությունը կազմել է 42.6%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 44.6% ցուցանիշի դիմաց:

2023թ.-ի առաջին կիսամյակում Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունները բնորոշել են նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության ռիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական տնտեսական նորմատիվները ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում եղել են ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվների թույլատրելի մեծության սահմաններում :

Բանկի ֆինանսավորման աղբյուրները

2023թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ Բանկի կողմից ներգրավված փոխառու միջոցների կազմում ամենամեծ տեսակարար կշիռը՝ 82.7%, կազմել են հաճախորդներից ներգրավված միջոցները: Սույն ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է ավելի քան 46 մլրդ դրամով (16.6%-ով), ինչը վկայում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ձևերի սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին: Բանկերից ներգրավված միջոցները կազմում են փոխառու միջոցների 0.2%-ը, այլ փոխառու միջոցները՝ 9%:

30.06.2023թ.-ի դրությամբ Բանկի դրամային և դոլարային տեղաբաշխված պարտատոմսերի ծավալը կազմել է 19.7 մլրդ ՀՀ դրամ, որոնք կազմում են փոխառու միջոցների 5%-ը:

Այսպիսով, 2023թ.-ի առաջին կիսամյակի վերջի դրությամբ Բանկը գրանցել է սեփական և փոխառու միջոցների 17.4% հարաբերակցություն՝ 392.2 մլրդ ՀՀ դրամ փոխառու միջոցների և 68.3 մլրդ ՀՀ դրամ սեփական կապիտալի մեծությամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2023թ. առաջին կիսամյակի դրությամբ ՀՀ բանկային համակարգը բոլոր էական ցուցանիշների գծով արձանագրել է աճ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատ: Բանկային համակարգի ակտիվները աճել են 16.05%-ով՝ կազմելով 8,480.91 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները հաճախորդների նկատմամբ՝ 29.44%-ով՝ կազմելով 5,106.43 մլրդ ՀՀ դրամ, ընդհանուր կապիտալի գծով արձանագրվել է 21.74% աճ և կազմել 1,416.85 մլրդ ՀՀ դրամ: 30.06.2023թ.-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 141.98 մլրդ ՀՀ դրամ, որը 23.92%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Բանկը 30.06.2023թ. դրությամբ բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա հաշվարկված ֆինանսական ցուցանիշներով ՀՀ բանկային համակարգում զբաղեցնում է՝

- ակտիվներ՝ 6-րդ տեղ (460 մլրդ դրամ կամ համակարգի 5.4%),

- պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 6-րդ տեղ (324 մլրդ դրամ կամ համակարգի 6.4%),
- վարկային ներդրումների ծավալով՝ 7-րդ տեղ (233 մլրդ դրամ կամ համակարգի 5.2%),
- ընդհանուր կապիտալ՝ 6-րդ տեղ (68.3 մլրդ դրամ կամ համակարգի 4.8%),
- զուտ շահույթ՝ 5-րդ տեղ (7.6 մլրդ դրամ կամ համակարգի 5.4%):

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բանկը ՀՀ բանկային համակարգում դիրքավորված է և գործունեությունը ծավալում է որպես ունիվերսալ բանկ՝ զարգացման գերակա ուղղություն դիտարկելով մանրածախ բանկային ծառայությունների մատուցումը՝ թվային տեխնոլոգիաների առաջանցիկ զարգացման միջոցով:

Բանկի առաջիկա տարիների հիմնական նպատակն է գործունեության բոլոր ոլորտներում լայնամասշտաբ թվային տրանֆորմացիայի իրականացումը և թվային էկոհամակարգի ձևավորումը, որոնք իրենց արտացոլումը պետք է գտնեն ինչպես հաճախորդներին մատուցվող թվային ծառայությունների թե քանակային և թե ծավալային ավելացման վրա, այնպես էլ Բանկի ներքին գործընթացներում՝ կատարելագործելով, պարզեցնելով և արդիականացնելով գործընթացները՝ ներդնելով տեխնոլոգիական այնպիսի գործիքակազմ և լուծումներ, որոնք ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում կապահովեն Բանկի որակական զարգացման համար հիմնարար և կայուն հիմքեր ու նախադրյալներ:

Բանկի առաքելությունն է միավորելով Բանկի հաճախորդների, բաժնետերերի և աշխատակիցների շահերը՝ յուրաքանչյուրի համար ստեղծել հավելյալ արժեք՝ նպաստելով կյանքի որակի բարձրացմանը:

Բանկի տեսլականն է դառնալ թվային բանկային ծառայությունների գծով առաջին նախընտրության բանկ Հայաստանում:

Բանկը հաճախորդներին ծառայություններ մատուցելիս որդեգրել է հետևյալ արժեքները.

- ✓ Հաճախորդակենտրոն գործունեություն
- ✓ Մպասարկման գերազանցություն
- ✓ Թափանցիկություն
- ✓ Փոխվստահություն
- ✓ Ազնվություն

- ✓ Նորարարություն
- ✓ Հուսալիություն
- ✓ Պատասխանատվություն

Բանկը կիրառում է հետևյալ կորպորատիվ արժեքները.

- ✓ Սոցիալական և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվություն
- ✓ Բանկի համբավ
- ✓ Արհեստավարժություն
- ✓ Նորարարություն
- ✓ Պատասխանատվություն
- ✓ Թիմային աշխատանք
- ✓ Ուսուցում և զարգացում
- ✓ Ոգեշնչվածություն

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքներ, ակցիաներ, ներդրված ծառայություններ և նորամուծություններ.

- ✓ Mastercard GooglePay` Android օպերացիոն համակարգով աշխատող հեռախոսների NFC մոդուլի միջոցով անհպում վճարումներ ընդունող առևտրային և կանխիկացման կետերում գործարքների իրականացում և արշավի իրականացում (Mastercard G PAY)
- ✓ Mastercard միջազգային վճարահաշվարկային համակարգի հետ համագործակցության շրջանակներում Բանկի իրականացված արշավի կազմակերպում, իրականացում և ամփոփում (Mastercard Converse Mastercard Woman’s Card):
- ✓ Visa միջազգային վճարահաշվարկային համակարգի հետ համագործակցության շրջանակներում Բանկի իրականացված արշավի կազմակերպում, իրականացում (C-POS հավելվածի շրջանակում):
- ✓ Yerevan Tech Forum 2k23-ին որպես 4G գործընկեր Բանկի ներկայացուցչության ապահովում տաղավարում, սոցիալական հարթակներում միջոցառման լուսաբանում:
- ✓ Leasing Expo-ում Բանկի ներկայացուցչության ապահովում տաղավարում, սոցիալական հարթակներում միջոցառման լուսաբանում:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկում գործող կառավարման համակարգի զարգացումը ենթադրում է կառավարման բաց, մրցունակ, արդյունավետ համակարգի կատարելագործում, Բանկի գործունեության համապատասխանեցում արտաքին միջավայրի մշտապես փոփոխվող պայմաններին, ֆինանսական համակարգում գնալով սրվող մրցակցությանը դիմակայում, որոշումների կայացման ճկունության աստիճանի և պատասխանատվության մակարդակի բարձրացում, կորպորատիվ կառավարման համակարգի զարգացում, որն ուղղված կլինի հորիզոնական և ուղղահայաց փոխհարաբերությունների կատարելագործմանը, Բանկում բիզնես գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացմանը և Բանկի գործունեության միջազգային լավագույն փորձի համապատասխանեցմանը՝ ապահովելով «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի պահանջները:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձացում:

Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը

Բանկն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարելու) իր մասնակիցներին (բաժնետերերին) միջանկյալ /եռամսյակային և կիսամյակային/ կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունվում է Բանկի Խորհրդի կողմից: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

Բանկի կողմից շահութաբաժինների վճարման և դրանց չափերի մասին որոշում ընդունելիս հաշվի են առնվում Բանկի կապիտալացման ու իրացվելիության ընթացիկ և կանխատեսվող մակարդակները, Բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը և վերջինիս իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, շահութաբաժինների վճարման ազդեցությունը Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների վրա, արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը Բանկի հետագա գործունեության վրա և այլն:

ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրականացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Ռիսկերի կառավարման ընդհանուր քաղաքականության տեսակետից Բանկը գործում է իր ներքին իրավական ակտերով սահմանված սահմանափակումների հիման վրա, նախանշված ռազմավարական ծրագրով, իր տարեկան բյուջեի և մշակված միջոցառումների պլանով:

Հավելված 1-ով ներկայացված ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է “Ռիսկի կառավարում” թիվ 30 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2023 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ